# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<26>> դեկտեմբերի 2025թ. N ՄՈ/1083-Ա

ք. Արմավիր

### «ԾԻԱԾԱՆԻ ՄԻՋՆԱԿԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳՈՀԱՐ ԳԱԶԱՆՅԱՆԻՆ ԱՐՏԱԺԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 145-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 146-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, դպրոցի ուսումնական աշխատանքները կազմակերպելու նպատակով.

*որոշում եմ՝*

1. «Ծիածանի միջնակագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Գազազյանին ներգրավել սահմանված աշխատաժամանակից ավելի տևողությամբ աշխատանքի՝ հնգօրյա աշխատանքային ռեժիմով ժամը 8.30-ից մինչև 19.20-ը, մինչև դպրոցի շինարարական աշխատանքների ավարտը:
2. Դպրոցի հաշվապահին՝ սահմանված կարգով իրականացնել արտաժամյա աշխատանքների վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և տարածվում է 2025 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

ՄԱՐԶՊԵՏ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ